ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

(Զեկույց սահմանադրական արդարադատության հիմնախնդիրներին նվիրված միջազգային կոնֆերանսում, Ալժիր, 30 հոկտեմբերի, 2008թ.)

Գ.Գ. Հարությունյան, ՀՀ ՍԴ նախագահ, պրոֆեսոր

Միջազգային խորհրդաժողովի հարգելի մասնակիցներ,

Առաջին հերթին ցանկանում եմ շնորհակալության խոսք ուղղել Ալժիրի սահմանադրական խորհրդին եւ Եվրախորհրդի Վենեցիկի հանձնաժողովին՝ այս կարեւոր խորհրդաժողովի հրավիրման եւ այն բարձր մակարդակով կազմակերպելու համար:

Թեման, որը մեր քննարկման առարկան է դարձել, խիստ հրատապ է՝ հատկապես երիտասարդ ժողովրդավարության երկրների համար, որտեղ լուրջ խնդիրներ կան սահմանադրական մշակույթի զարգացման, հասարակության սահմանադրական իրավագիտակցության մակարդակի բարձրացման, երկրում օրենքի բացերի հաղթահարման, պետական իշխանության մարմինների գործունակության ամրապնդման, սահմանադրական հիմնարար արժեքներն ու սկզբունքներն ապրող իրողություն դարձնելու առումով:

Այսօր տարբեր ելույթներում անդրադարձներ եղան սահմանադրական նորմերի մեկնաբանման տարբեր մոտեցումներին: Կարեւորվեցին ինչպես վերացական պաշտոնական մեկնաբանման ինստիտուտը, այնպես էլ կոնկրետ մեկնաբանման տարբեր դրսեւորումները: Միջազգային պրակտիկայի ուսումնասիրումը վկայում է, որ ներկայումս աշխարհում գործող 110 սահմանադրական դատարաններից եւ խորհուրդներից 42-ը Սահմանադրության, օրենքների եւ այլ նորմատիվ ակտերի պաշտոնական նորմատիվ (վերացական) մեկնաբանման իրավասություն ունեն: Թվով 43 երկրներում Սահմանադրության պաշտոնական մեկնաբանությունը կապվում է պետական իշխանության կենտրոնական մարմինների միջեւ առաջացած վեճերի լուծման հետ: Ինչպես հայտնի է, դա սկզբնավորվեց դեռեւս 1949թ. Գերմանիայի Դաշնության Հիմնական օրենքի 93 հոդվածի 1-ին կետով: Այս ինստիտուտը չափազանց կարեւոր է Սահմանադրության գերակայության երաշխավորման լիարժեքությունն ապահովելու տեսանկյունից, եւ մեր համոզմամբ այն հետագա ավելի լայն տարածում է գտնելու բազմաթիվ այլ երկրներում:

Մենք կփորձենք անդրադարձ կատարել ոչ միայն Սահմանադրության **անմիջական, վերացական պաշտոնական մեկնաբանման,** այլեւ, այսպես կոչված, **էվոլյուցիոն կոնկրետ մեկնաբանման** սկզբունքներին:

Կցանկանայինք առանձնահատուկ կարեւորել, որ Սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանման անհրաժեշտությունն առավել մեծ է այն երկրներում, որտեղ նախատեսված է սահմանադրական փոփոխությունների առավել դժվարին ընթացակարգ, որտեղ Սահմանադրությունն իրավահարաբերությունների կանոնակարգման առավել քիչ մանրամասներ է բովանդակում, իսկ օրենսդրական պրակտիկայում բացակայում է օրգանական կամ սահմանադրական օրենքների ինստիտուտը: Նման պայմաններում Սահմանադրության պաշտոնական մեկնաբանությունը դատական պրակտիկայի կողմից դառնում է երկրում սահմանադրական զարգացումների ամենաարդյունավետ ճանապարհը: Դրա ներուժի լիարժեք չօգտագործումը սահմանադրական ճգնաժամերի պատճառ կարող է դառնալ:

Սահմանադրությունը չի կարող մնալ ցանկությունների արձանագրման մակարդակում, այլ պետք է երաշխավորի ու ապահովի դրանում ամրագրված նպատակների ու սկզբունքների իրացումը: Գլխավոր հարցն այն է, թե ինչպե՞ս հասնել դրան, ինչպե՞ս երաշխավորել, որպեսզի Սահմանադրությունը դառնա ապրող իրողություն՝ արտացոլելով նաեւ հասարակական զարգացումների հիմնական միտումները: Այս հարցերի պատասխանը մեծապես պայմանավորված է սահմանադրական հիմնական սկզբունքների ու կոնկրետ նորմերի պաշտոնական մեկնաբանման եւ Սահմանադրության գերակայության հուսալի պաշտպանության մեխանիզմների առկայությամբ:

Ամերիկյան սահմանադրական մշակույթի բնորոշ գծերից մեկը հենց այն է, որ մեծ դեր վերապահվեց դատական իշխանությանը Սահմանադրության մեկնաբանման հարցում: Դատարանի մենաշնորհն է ոչ միայն ասելու, թե ի՞նչ է Սահմանադրությունը գործնականում, այլեւ ինչպե՞ս պետք է այն ընկալվի: Սահմանադրության էության մասին նման հիմնադրույթը կառուցված է հասարակական հարաբերությունների դինամիկ զարգացման ընթացքում դրա իմաստի փաստարկման վրա: Սա է պատմականորեն արդարացված ճանապարհը Սահմանադրության ինքնաբավությունը երաշխավորելու համար:

Սահմանադրությունը պետք է ներառի քաղաքացիական հասարակության խորքային, մնայուն արժեքների ողջ համակարգը եւ երաշխավորի դրանց կայուն ու հուսալի պաշտպանությունը: Սահմանադրական փոփոխությունները պետք է լինեն դժվարին ու խստիվ հիմնավորված: Սահմանադրական կայունությունը երկրի կայունության գլխավոր երաշխիքն է: Մյուս կողմից, Սահմանադրությունը չի կարող լինել քարացած, չարձագանքել հասարակական առաջընթացին, դրա խթանից վերածվելով այն արգելակողի: Միջազգային պրակտիկան այս խնդրի արդյունավետ լուծումների մեծ զինանոց է առաջադրել: Դրանց շարքում, հատկապես անցյալ դարի ընթացքում, առավել կարեւորվեց սահմանադրական էվոլյուցիոն կոնկրետ մեկնաբանման ինստիտուտը:

Վերջինս հնարավորություն է տալիս Հիմնական օրենքին հաղորդել առավել մեծ ճկունություն, հասարակական դինամիզմ, էապես նվազեցնել դրանում փոփոխություններ կատարելու գայթակղությունը: ԱՄՆ սահմանադրագետների կարծիքով՝ այս երկրի Սահմանադրության կենսունակությունը մեծապես պայմանավորված է նրանով, որ Գերագույն դատարանն ավելի քան 215 տարիների ընթացքում շուրջ 540 հատոր կազմող իր որոշումներում ներկայացված իրավական դիրքորոշումների ու մեկնաբանությունների միջոցով շարունակաբար թարմ լիցք է հաղորդել Հիմնական օրենքին: Կցանկանայինք հատկապես մեջբերել պրոֆ. Դիկ Հովարդի եզրահանգումն այն մասին, որ «Գաղափարները՝ շարադրված ԱՄՆ Գերագույն դատարանի նախագահ Ջոն Մարշալի կողմից «Մերբերին ընդդեմ Մեդիսոնի» դատական գործի առնչությամբ, դարձան սահմանադրականության տարրեր աշխարհի տարբեր մասերում: **Լիովին կարելի է հաստատել, որ դա հանդիսացավ ամերիկյան ամենամեծ ներդրումը սահմանադրականության մեջ**»[1] (ընդգծումը մերն է - Գ.Հ.):

Ամերիկյան սահմանադրական միտքը միարժեքորեն հավաստում է, որ Սահմանադրության արդարադատական մեկնաբանման հնարավորությունն է Հիմնական օրենքին հաղորդում դինամիկ կայունություն ու ջթուլացող գործունակություն:

Վերջին տասնամյակների եվրոպական զարգացումները նույնպես վկայում են, որ սահմանադրությունների մեկնաբանման հարցում բացառիկ կարեւորվում է սահմանադրական դատարանների դերը, որոնց իրավական դիրքորոշումները մայրցամաքային իրավական համակարգում սահմանադրական իրավունքի կարեւորագույն աղբյուր են դառնում: Այս թեմային նվիրված բազմաթիվ միջազգային քննարկումների ժամանակ՝ նպատակ ունենալով բացահայտել սահմանադրական դատարանների դերը Սահմանադրության կայունության ու զարգացման գործում, հատուկ կարեւորվում է Սահմանադրության վերացական ու կոնկրետ-անուղղակի մեկնաբանությունների բացառիկ դերն իրավական պետության կայացման ու զարգացման գործում: Ընդ որում, համոզումն այն է, որ աշխարհում գործող բոլոր սահմանադրական դատարաններից առավել արդյունավետ սահմանադրական վերահսկողություն են իրականացնում այն ինստիտուտները, որոնք լայն իրավասություններ ունեն Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման ճանապարհով երաշխավորելու սահմանադրականության կայունությունը:

---

[1] Дик Ховард - К конституционной демократии во всем мире: американский взгляд. ВОПРОСЫ ДЕМОКРАТИИ. Электронный журнал Государственного департамента США. Том 9, N1, 2004 г., http://usinfo.state.gov/journals/journalr.htm, // Êîíñòèòóöèîííîå ïðàâîñóäèå, 2004, N3, էջեր 27-28:

Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման հարցը մի շարք նորանկախ երկրներում այնքան է կարեւորվում, որ ընդհուպ ամեն մի առանձին պատգամավորի իրավունք է վերապահվում այդ հարցով դիմել սահմանադրական դատարան: Տիպական է հատկապես Մոլդովայի փորձը: Օրինակ, թեկուզ այս երկրի սահմանադրական դատարանի 2004թ. ապրիլի 2-ի որոշման ուսումնասիրությունը վկայում է, թե ինչպես մեկ պատգամավորի դիմումի հիման վրա քննության է առնվում Սահմանադրության 116 հոդվածի 3-րդ մասի մեկնաբանման հարցը եւ լուծում է տրվում մի խնդրի, որը կարող էր բազմապիսի շահարկումների առարկա դառնալ: Մենք այստեղ կարեւորում ենք ոչ այնքան կոնկրետ խնդիրը, որքան նման խնդիրների իրավական լուծման հնարավորությունը: Տվյալ պարագայում էական է նաեւ խորհրդարանի հեղինակությունը եւ վերահսկիչ դերը, հասարակության մեջ բացասական հասարակական էներգիայի կուտակումներ թույլ չտալը, սահմանադրական արդարադատության գործունակությունը եւ այլն:

Սահմանադրական նորմերի պաշտոնական մեկնաբանման համակարգի ներդրումը սահմանադրական արդարադատության պրակտիկայում պահանջում է ոչ միայն դիմող սուբյեկտների շրջանակի ճիշտ ընտրություն, դատավարական առանձնահատկությունների հստակեցում, այլեւ տվյալ գործերով ընդունված որոշումների կատարման օրենսդրական հուսալի երաշխիքների ապահովում:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Սահմանադրության վերացական մեկնաբանման իրավասություն չունի: Ցավոք, մեզանում դեռեւս ներդրված չէ նաեւ սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի լուծման ինստիտուտը: Սահմանադրական նորմերի մեկնաբանման խնդիրն առաջ է գալիս ցանկացած կոնկրետ գործի քննության ժամանակ, երբ անհրաժեշտ է գնահատել իրավանորմի սահմանադրականությունը՝ դրա սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման եւ սահմանադրական նորմի հետ համադրման ճանապարհով: Այստեղ առաջնահերթ նշանակություն ունի Սահմանադրության հիմնարար սկզբունքների իրացման երաշխավորումն օրենսդրական քաղաքականության մեջ: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի ուղղակի պահանջն է, որ օրենքների եւ այլ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելու վերաբերյալ գործերով որոշում ընդունելիս սահմանադրական դատարանը պետք է պարզի վիճարկվող ակտի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը, մասնավորապես հաշվի առնելով՝

1) իրավական ակտի պահանջվող տեսակը.

2) իրավական ակտն ընդունելու եւ գործողության մեջ դնելու Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածությունը.

3) մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը.

4) Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման ապահովվածությունը.

5) պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնապար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները.

6) Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանը ոչ միայն այս պահանջները հաշվի առնելով է որոշում նորմը սահմանադրական է, թե՝ ոչ, այլեւ հաճախ հետեւություն է անում, որ նորմը սահմանադրական է միայն տվյալ իրավակարգավորման վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում: Իսկ այդ դիրքորոշումները, դատարանի դոկտրինալ մոտեցումները ոչ այլ ինչ են, քան սահմանադրական նորմերի համակարգված մեկնաբանություն:

Տիպական օրինակներից մեկը վերջերս քննված գործն էր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի սահմանադրականության վերաբերյալ: Այդ հոդվածը վերնագրված է «Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը» եւ նախատեսում է, որ պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: Այս խնդրին անդրադարձել է նաեւ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովը՝ եվրոպական չափանիշներին տվյալ իրավակարգավորման համապատասխանության տեսանկյունից:

Հարցի քննության արդյունքում սահմանադրական դատարանն անհրաժեշտ համարեց հստակ իրավական դիրքորոշումներ արտահայտել սահմանադրական այնպիսի հասկացությունների վերաբերյալ, ինչպիսիք են «սահմանադրական կարգ», «ժողովրդի իշխանություն», «պետական իշխանություն», «հրապարակային կոչեր», «պետական իշխանության բռնությամբ զավթում» եւ այլն, որոնց շուրջ դիմող եւ պատասխանող կողմերը տրամագծորեն տարբեր դիրքորոշումներ ունեին, եւ առանց այդ մեկնաբանությունների հնարավոր չէր բացահայտել օրենքի նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը: Արդյունքում, սահմանադրական դատարանը գտավ, որ նշված հոդվածը

համապատասխանում է Սահմանադրությանը միայն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Սահմանադրական նորմի իրավական բովանդակության մեկնաբանումը եւ օրենքի նորմի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը հաճախ մեզ բերում է նաեւ այն հետեւությանը, որ իրավակիրառական պրակտիկան օրենքի նորմին տվել է այնպիսի մեկնաբանություն, որով հանդերձ այն հակասության մեջ է մտնում սահմանադրական նորմի հետ: Նման պարագայում մեր որոշումը ձեւակերպվում է հետեւյալ կերպ. օրենքի տվյալ նորմը, իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ հանդերձ, ճանաչել Սահմանադրությանը հակասող եւ անվավեր:

Կցանկանայի անդրադառնալ եւս մեկ առանձնահատկության: Անցումային երկրներում կարեւորվում է նաեւ այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներն օգնեն օրենսդիր եւ այլ իրավաստեղծ մարմիններին ճիշտ առաջնորդվելու սահմանադրական հիմնարար սկզբունքներով եւ լուծումներով՝ իրենց իրավակարգավորիչ գործունեության ընթացքում: Դա վերաբերում է ոչ միայն սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված հիմնարար սկզբունքներին, այլեւ մարդու իրավունքների սահմանափակման սահմանադրական չափանիշների երաշխավորմանը, այդ իրավունքների՝ որպես անմիջական գործող իրավունքների, ապահովմանը:

Տիպական օրինակներից մեկն է, երբ մեր դատարանը քննության էր առնում սեփականության իրավունքի պաշտպանության հիմնահարցը՝ կապված պետության կարիքներով պայմանավորված սեփականության օտարման խնդրի հետ: Սահմանադրական դատարանը համալիր վերլուծությամբ մեկնաբանելով Սահմանադրության մի շարք հոդվածներ եւ դրանք համադրելով օրենսդրական կարգավորման հետ, եկավ այն հետեւությանը, որ ՀՀ քաղաքացիական եւ հողային օրենսգրքերի մի շարք դրույթներ, ինչպես նաեւ ՀՀ կառավարության առանձին որոշումներ չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը: Հիմնական փաստարկն այն էր, որ տեղի էր ունեցել իրավունքների այնպիսի սահմանափակում, որն արգելափակման բնույթ էր ստացել եւ խեղաթյուրել իրավունքի էությունը: Նման որոշումներ ընդունելիս սահմանադրական դատարանը ելակետ է ընդունում իրավունքի գերակայության երաշխավորումը: Սահմանադրական դատարանը գտավ նաեւ, որ ՀՀ իրավական համակարգում օրենսդիր եւ գործադիր իշխանությունների կողմից չեն ստեղծվել անհրաժեշտ ու բավարար նորմատիվային իրավական նախադրյալներ ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի պահանջների իրականացման համար՝ այն իրավական բովանդակության ու նշանակության տեսանկյունից, ինչը դրված է սահմանադրական նորմի հիմքում:

Այս որոշման առանձնահատկությունը նաեւ այն էր, որ սահմանադրական դատարանն անհրաժեշտ համարեց իր իրավական դիրքորոշումների միջոցով հստակեցնել Սահմանադրությանը համապատասխան տվյալ հիմնահարցի օրենսդրական կանոնակարգման ելակետային մոտեցումները: Մեր կարծիքով, նման մոտեցումը խիստ օգտակար է հասարակական հարաբերությունների սահմանադրականացման գործընթացն արդյունավետ ընթացքի մեջ դնելու համար:

Նման որոշումների ընդունման ժամանակ բացառիկ կարեւոր նշանակություն ունի նաեւ այն հարցը, թե երբ եւ ինչ կարգով են ուժի մեջ մտնում սահմանադրական դատարանի որոշումները, արդյո՞ք դրանք վերաբերում են միայն ապագային, թե՞ հետադարձության հնարավորություն ունեն, կամ հնարավո՞ր է տարաժամկետել որոշման ուժի մեջ մտնելը, թե՝ ոչ: Ժամանակի սղությունից ելնելով խորհուրդ կտայի այս հարցերով հետաքրքրվողներին ծանոթանալ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-13-րդ եւ 15-17-րդ մասերի դրույթներին, որտեղ այդ հիմնախնդիրներն օրենսդրորեն հստակ կանոնակարգվել են:

Վերջում կցանկանայի շեշտել, որ Սահմանադրությունը, վերջին հաշվով, հասարակական համաձայնություն է կենսագոյի հիմնարար կանոնների շուրջ: Սահմանադրության լեգիտիմությունը բացառիկ կարեւոր նշանակություն ունի երկրում սահմանադրական ժողովրդավարության հաստատման եւ հասարակության առաջադիմության համար: Դատարանների կողմից սահմանադրական նորմերի մեկնաբանությունը պահանջում է ծայրահեղ զգուշություն, նրբանկատություն, սահմանադրական մշակույթի բարձր մակարդակ՝ Սահմանադրության լեգիտիմությունը չխաթարելու համար: Սա այն դեպքն է, երբ սահմանադրական դատարանների համար ինքնասահմանափակման սկզբունքն առավել կարեւոր է դառնում, որը նաեւ հնարավորություն է տալիս խուսափել քաղաքական հարաբերությունների մեջ ներքաշվելուց: Սակայն դա նույնպես չպետք է ծայրահեղության հասնի՝ զուտ ֆորմալիստական մոտեցում դրսեւորելով իրավանորմերի սահմանադրականության գնահատմանը: Ուստի կարեւոր է սահմանադրական ու օրենսդրական հստակ կանոնակարգմամբ գտնել տվյալ երկրի սահմանադրական պրակտիկայի համար սահմանադրական նորմերի մեկնաբանման առավել արդյունավետ ու գործուն համակարգը:

Շնորհակալություն ուշադրության համար: